

# ՀՈՒՅՍ

## դժվարին ժամանակներում

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ



# ՀՈՒՅՍ
## դժվարին ժամանակներում

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

**Hope for Difficult Times, Joyce Meyer, Armenian**

© 2022 Joyce Meyer Ministries

All rights reserved. This book or any portion thereof may not be reproduced or used in any amount whatsoever without the express written permission of the publisher except for the use of brief quotations in a book review.

Joyce Meyer Ministries P.O. Box 655
Fenton, Missouri 63026 joycemeyer.org

**«Հույս՝ դժվարին ժամանակներում», հեղինակ՝ Ջոյս Մայեր, հայերենով**

© 2022 Ջոյս Մայերի ծառայություն

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գիրքը կամ դրա ցանկացած մաս արգելվում է վերարտադրել կամ օգտագործել ցանկացած ձևով՝ առանց հրատարակչի անմիջական գրավոր թույլտվության, բացառությամբ գրախոսականներում կարճ մեջբերումներ անելուց:

«Ջոյս Մայերի ծառայություն», Փ/Ա 655
Ֆենտոն, Միսսուրի, 63026, joycemeyer.org

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ներածություն……………………………………………5

1. Հույսով լեցուն……………………………………………9
2. Ինչ անել, երբ նույն տեղում եք մնացել……………17
3. Հույսով լեցուն վերաբերմունք ընտրեք…………25
4. Վստահեք Աստծուն, երբ փոթորիկով եք անցնում……………………………………………31
5. Ամեն ինչ՝ նոր……………………………………………39
6. Ինչպես վեր նայել, երբ ընկճված եք ………………47

Ամփոփում……………………………………………57

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Այնքա՜ն ուրախ եմ, որ որոշել եք ընթերցել այս գիրքը**: Հնարավոր է, որ այս պահին դժվարին իրավիճակում եք կամ շփոթված եք այն ամենի պատճառով, ինչ տեղի է ունենում ձեր կյանքում: Թեև ձեր մասնավոր հանգամանքները հայտնի չեն ինձ, կա մեկ բան, որում ես համոզված եմ.

**Դուք միայնա՛կ չեք**. **Աստված սիրում է ձեզ, մենք՝ նույնպես**:

Ես գրել եմ այս գիրքը, որպեսզի խրախուսեմ և հույսով լցնեմ ձեր սիրտը: Ուզում եմ, որ իմանաք, որ հենց հիմա՝ ձեր իրավիճակում, Աստված ձեր կողքին է, և Նրա համար անհնարին ոչինչ չկա (տե՛ս Ղուկաս 1.37): Նա բարի ծրագրեր ունի ձեր ապագայի համար և արդեն անտեսանելի կերպով գործում է, որպեսզի օգնի ձեզ (տե՛ս Երեմիա 29.11):

Գուցե բախվել եք անկանխատեսելի դժբախտության և չգիտեք, թե ինչպես ի մի բերեք շատ բաներ և շարունակեք կյանքը: Կամ, գուցե, առողջական խնդիր ունեք և բժշկի դիմելու հնարավորություն չունեք: Ես գիտեմ, որ այնքա՜ն մարդիկ են գոյատևում՝ առանց միջոցների, նույնիսկ չիմանալով, թե ինչպես են կերակուր հայթայթելու:

Երբ մենք անասելի դժվարություններով ենք անցնում, կարող ենք հանձնվելու և ամեն ինչ թողնելու

գայթակղություն ունենալ: Այնուամենայնիվ, լավագույնը, ինչ կարող ենք անել, Աստծուն վստահելն է և լիառատ հույս ունենալը: Սակայն, իրականում, ի՞նչ է հույսը:

Հույսը վստահ ակնկալիք է, որ ինչ-որ լավ բան է տեղի ունենալու: Այն սերտորեն կապված է մեր հավատքի հետ՝ այն ամենի հետ, ինչին հավատում ենք: Երբ մենք համարձակվում ենք հավատալ, հույսը հեղեղում է մեր կյանքը՝ ուրախության և խաղաղության հետ միասին:

Թշնամին ուզում է, որ մենք անհույս լինենք: Նա ձգտում է համոզել մեզ, որ ամեն ինչ կորած է, և այլևս ոչինչ չի բարելավվելու: Բայց Աստված ցանկանում է, որ մենք հույսով լցվենք, հավատանք Նրան և մեծ բաների սպասենք Նրանից: Իրականում, Աստվածաշունչն ասում է, որ Նա «հույսի Աստված» է, Ով լի է ողորմությամբ և նոր սկիզբ է տալիս (տե՛ս Հռոմեացիների 15.13):

Մանկությանս տարիներին իմ հորից կրած սեռական, խոսքային և զգացմունքային բռնության պատճառով ես անհույս վերաբերմունք ունեի: Ինձ հետ այնքա՜ն բացասական բաներ էին կատարվել, որ սկսել էի մշտապես վատ բաների սպասել, նույնիսկ քրիստոնյա դառնալուց հետո:

Այնուամենայնիվ, կարող եմ անկեղծորեն ասել, որ Աստված վերափոխեց ինձ: Նա դարձրեց բացասաբար տրամադրված և վատատես կնոջը հույսով լեցուն անձնավորություն, ով մշտապես, ամեն քայլափոխին

սպասում է Նրա բարությանը: Նա օգնեց ինձ աստիճանաբար բացահայտել հույսի զորությունը և դերը իմ մտքում, խոսքում, վերաբերմունքի մեջ և կյանքիս յուրաքանչյուր բնագավառում: Այնպես որ, նույնիսկ երբ դժվարին հանգամանքների եմ բախվում կամ անհաջողության եմ հանդիպում, միևնույն է, չեմ կորցնում իմ հույսը՝ իմանալով, որ Աստված ամեն ինչ բարուն գործակից կդարձնի ինձ համար:

Գուցե դուք շատ ցավեր եք կրել, բազում հիասթափություններ և անհաջողություններ եք ունեցել և չեք պատկերացնում, թե ինչպես ձեր կյանքը կարող է բարելավվել: Թշնամին ձգտում է համոզել, որ ձեր հանգամանքները երբեք չեն փոխվի: Բայց Աստված ցանկանում է, որ իմանաք, որ Նա սիրում է ձեզ, և դուք կարող եք վստահել. Նա հրաշք կգործի ձեր խառնաշփոթ հանգամանքներում: Ձեր գործը երբեք հույսը չկորցնելն է. դուք պետք է ակնկալեք, որ Նրա բարությունը կարող է հայտնվել ցանկացած պահին:

Այս գրքի էջերում ներկայացված են մի քանիսն այն մեծագույն դասերից, որոնք Աստված սովորեցրել է ինձ այս բնագավառում՝ դասեր, որոնք կզորացնեն ձեր հավատքը և կօգնեն նորովի վերաբերվել կյանքին:

Ես հաճախ եմ ասում, որ այն մարդը, որը հույսով լցված է մնում, որը շարունակում է հավատալ Աստծո Խոսքին և հրաժարվում է հանձնվել, երբեք չի պարտվի: Պատճառն այն է, որ նույնիսկ կյանքի փոթորիկներում, երբ վստահում եք Նրան, Նա կարող է Իր

անհավատալի խաղաղությամբ և ուրախությամբ լցնել ձեր կյանքը և բարուն գործակից դարձնել ձեր իրավիճակը:

Ես չգիտեմ այն դժվարությունները, որոնք կրել եք ձեր կյանքում, և ո՛չ էլ՝ թե ինչով եք հիմա անցնում: Բայց գիտեմ, որ Աստված անչափ սիրում է ձեզ, Նա հետևում է ձեր կյանքին, և Նա օգնելու է ձեզ (տե՛ս Հռոմեացիների 8.38,39, Սաղմոս 33.18):

Նա ամեն հույսի Աստվածն է և կարող է հրաշալիորեն փոխել նույնիսկ ձեր կյանքի ամենածանր ժամանակները:

# Գլուխ 1

# Հույսով լեցուն

**Երբեմն ասում եմ, որ մեր սերնդի կարգախոսն է՝ «կհավատամ, երբ կտեսնեմ»**: Մենք ուզում ենք տեսնել, մինչև հավատալը: Իրականում, մեզնից շատերը դժվարանում են հավատալ, որ Աստված գործում է մեր կյանքում, քանի դեռ չենք տեսնում մեր բնական աչքերով, որ ինչ-որ բան է կատարվում:

Բայց Աստված այդպես չի գործում. Նրա աշխատանքն անտեսանելի է: Գուցե դուք չեք տեսնում, որ ինչ-որ բան է կատարվում, բայց հավատո՞ւմ եք, որ Աստված գործում է ձեր կյանքում հենց հիմա: Դուք հավատո՞ւմ եք, որ Աստված ծրագիր ունի, որ օգնի ձեր երեխաների հարցում, ձեր ամուսնության հարցում և բոլոր այն հարցերում, որոնց համար տարիներ շարունակ աղոթել եք:

Երեմիա 29.11-ում գրված է, որ Աստված բարի բաներ է ծրագրում ձեր կյանքում, որ *ձեզ տա ապագան և հույսը:* Այլ կերպ ասած, Աստված ձեզ բարիք անելու հնարավորություն է փնտրում:

Գուցե դուք չեք կարողանում տեսնել ձեզ որպես դրական, հավատքով և հույսով լեցուն անձնավորություն: Եթե դուք այդպիսին եք, ես շատ լավ գիտեմ, թե ինչպես եք զգում: Որոշ մարդիկ պարզապես վախե-

նում են հուսալ, քանի որ նրանք բազում անգամներ հիասթափվել են և չեն կարծում, որ կրկին կարող են դիմանալ հիասթափության ցավին:

Բայց մի՛ մտահոգվեք, քանի որ Աստված «հույսի Աստված» է, Ով լի է ողորմությամբ և նոր սկիզբ է տալիս (տե՛ս Հռոմեացիների 15.13): Եվ երբեք ուշ չէ, որ սկսեք հավատալ, ակնկալել, հուսալ և սպասել Նրան:

## ՄԵԾ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ...

Հույսի մեր սահմանումն է. «լավատեսական և վստահ սպասում»:

Կարծում եմ՝ հաճախ մենք անգործունյա դիրքորոշում ենք ընտրում՝ որոշելով «սպասել և տեսնել», թե մեր կյանքում ինչ-որ բան կփոխվի՞, կամ՝ ինչ-որ դրական բան կկատարվի՞: Բայց Աստված ցանկանում է, որ նպատակաուղղված սպասենք: Նա ցանկանում է, որ մենք գործուն կերպով ինչ-որ բարի բան ակնկալենք:

Այնպես որ, իմ հարցը հետևյալն է. *ինչպիսի՞ սպասումներ ունեք:*

Ի՞նչ եք դուք տեսնում ձեր մտքում և երևակայությամբ: Ինչպե՞ս եք դուք խոսում ձեր ապագայի մասին: Երբ առավոտյան արթնանում եք, արդյո՞ք մտածում եք. *«Այսօր սովորական օր է, և ես կփորձեմ մի կերպ անցկացնել»,* թե՞ դուք արթնանում եք՝ ակնկալելով, որ այսօր ձեր կյանքում կարող է ճեղքում լինել:

Երբ կինը հղի է, մենք ասում ենք, որ նա «սպա-

սող» մայր է: Եվ որքան հղիությունը շարունակվում է, այնքան նա ավելի է սպասում այն իրադարձությանը, որը մոտենում է:

Իմ հղիությունները եզակի բնույթ էին կրում, քանի որ ես կրել եմ իմ չորս երեխաներից յուրաքանչյուրին որոշված ժամանակից մոտավորապես մեկ ամիս ավելի: Իմ բժիշկն ասում էր, որ ես միակ կինն եմ, որին նա ճանաչում է, որի հղիությունը փղի հղիության չափ է տևել:

Երբ իմ հղիություններից յուրաքանչյուրն ավարտին էր մոտենում, ամեն օր արթնանալիս ասում էի. «Այսօր ծննդաբերության օրն է լինելու. դա պետք է որ այսօ՛ր լինի»: Իմ ճամպրուկները հավաքված և պատրաստ էին: Ես մշտապես ստուգում էի ամեն ինչ, հավաստիանում էի, որ ամեն ինչ պատրաստ էր, և վստահ էի, որ իմ փոքրիկն ամեն պահի կարող էր ծնվել: Ամեն անգամ, երբ ինչ-որ ծակող ցավ էի զգում, մտածում էի. *«Հիմա՛ է: Նա ծնվո՛ւմ է»:*

Աստված ցանկանում է, որ դուք հենց այսպես վերաբերվեք Իրեն: Նա աներևակայելի ծրագիր է կազմել ձեր կյանքի համար, և Նա ցանկանում է, որ ակնկալեք Իր պատրաստած բարի բաներն ամեն քայլափոխին:

Հույսն ասում է. «Գուցե իմ իրավիճակը երկար ժամանակ է՝ նույնն է, բայց Աստված անհնարին բաների Աստված է, և ամեն ինչ կարող է փոխվել»:

# ԴՈՒՔ ՀՈՒՅՍԻ ԳԵՐԻ ԵՔ

Ինչպես ասացի, ես ամենաբացասական անձնավորությունն էի, որին ճանաչում էի: Ես մշտապես տեսնում էի բաժակի կիսով չափ դատարկ լինելը. ես դիտարկում էի յուրաքանչյուր իրավիճակ բացասական տեսանկյունից:

Այդ պատճառով էր, որ միշտ դժբախտ էի զգում: Կասկածները և բացասական վերաբերմունքը տրտմեցնում են մեզ... բայց հույսն ուրախություն է բերում:

Հույսը նշանակում է դրական մտածելակերպ և վերաբերմունք ունենալ: Հույսով լեցուն մարդը կտրականապես հրաժարվում է բացասաբար տրամադրված լինելուց: Թեև նա գիտակցում է իր կյանքի փոթորիկները և պայքարում է դրանց հետ, սակայն հույսով լեցուն է իր մտքում, իր դիրքորոշման մեջ, նաև մարդկանց հետ հաղորդակցվելիս:

Կարծում եմ՝ շատ հաճախ մենք ծուղակն ենք ընկնում, երբ սպասում ենք լավատեսական կամ հույսով լի տրամադրվածություն ունենալուն: Հուսալը նշանակում է որոշում կայացնել, որ մենք դրական վերաբերմունք ենք ունենալու և չենք ապրելու ըստ մեր զգացմունքների: Ճշմարտությունն այն է, որ երբ մենք հաստատ որոշում կայացնենք դրական և հույսով լեցուն մտածելակերպ ունենալու մասին, որոշ ժամանակ անց մեր զգացմունքները կհամապատասխանեն այդ որոշմանը:

Ես անչափ սիրում եմ Զաքարիա 9.12-ը.

*«Վերադարձե՛ք [ապահովության և բարգավաճման] ամրոցը, ո՛վ հույսի գերիներ. այսօր էլ Ես ազդարարում եմ, որ կրկնակի չափով վերականգնելու եմ ձեր առաջվա բարգավաճումը»* (AMPC):

Ի՞նչ է նշանակում «հույսի գերի» դառնալը: Նշանակում է, որ անկախ այն ամենից, ինչ տեղի է ունենում մեր կյանքում, մենք հրաժարվում ենք թողնել հույսը և վստահում ենք, որ Աստված կարող է օգնության հասնել:

Երբ դուք հույսի գերի եք դառնում, թշնամին չգիտի, թե ինչ անի: Գուցե նա ընդդիմանա ձեզ բացասական մտքերով, բայց չի կարողանա վնասել ձեզ, եթե վճռեք, որ ամեն ժամանակ լիովին վստահելու եք Աստծուն:

Աստված ցանկանում է օրհնել ձեզ: Նա ցանկանում է կրկնակին հատուցել ձեզ անցյալի ցավի համար և այն ամենի համար, ինչը կորսվել է (տե՛ս Եսայի 61.7): Եվ մեր արձագանքն անչափ կարևոր է: Մեր գործն է հավատալ, վստահել և հուսալ:

## ԺԱՄԱՆԱԿՆ Է ԳՑԵԼ ԽԱՐԻՍԽԸ

Եբրայեցիների 6.19-ում գրված է. *«[Այժմ] մենք ունենք սա [այս հույսը]՝ անձի հաստատ և անշարժ խարսխի պես [այն սահելով դուրս չի գա և չի կոտրվի ցանկացած մարդու ներքո, որ ոտք է դնում դրա վրա]...»* (AMPC):

Մաս առ մաս դիտարկենք այս աստվածաշնչյան խոսքը: Կարծում եմ՝ բոլորս գիտենք, թե ինչ է խա-

րիսխը: Երբ ուզում եք, որ նավը տեղում մնա, դուք խարիսխ եք գցում, և նավը կարող է շարժվել միայն դրա թույլ տված չափով:

Գրված է, որ հույսը «անձի խարիսխն» է: Մեր անձը բաղկացած է մեր մտքից, կամքից և զգացմունքներից: Մեր անձն է որոշում, թե ինչ ենք մտածում, ցանկանում և զգում:

Այսպիսով, ի՞նչ է սա նշանակում: Նշանակում է, որ երբ ամեն ինչ դժգույն է թվում... երբ մենք չենք հասկանում, թե ինչ է տեղի ունենում, երբ թվում է, թե Աստծո խոստումները երբեք չեն կատարվի մեր կյանքում, հույսը մեր խարիսխն է, որը ետ է քաշում մեզ՝ ասելով. «Սպասի՛ր: Այդ ամենը դեռ կատարվելու՛ է»:

Մեկ քայլ առաջ գնանք: Եբրայեցիների 6.19-ում գրված է, որ հույսը մեր խարիսխն է, և որ *«[այն սահելով դուրս չի գա և չի կոփրվի ցանկացած մարդու ներքո, որ ոտք է դնում դրա վրա]...»:*

Հույսը մեր խարիսխն է և այն խթանը, որը դրդում է մեզ «ոտք դնել» կամ քայլ անել: Ոմանք չեն վերապրում Աստծո խոստումները և զորությունը, պարզապես որովհետև նրանք հավատքով քայլ չեն անում: Քայլ անելն է, որ գործի է դնում Աստծո խոստումները:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Ավելի քան 40 տարի ճանապարհորդում եմ աշխարհով մեկ և սովորեցնում եմ Աստծո Խոսքը: Բայց դեռևս պատահում է, որ մինչև որևէ համաժողովի սկիզբը չեմ զգում, որ

օծված եմ, որակավորված եմ և պատրաստ եմ անելու այն, ինչ պետք է անեմ:

Մինչև ամբիոնի մոտ բարձրանալը, մտածում եմ. *«Աստված, ես իսկապես հուսով եմ, որ հայտնելու ես Քեզ. հակառակ դեպքում, ես մեծ փորձանքի մեջ եմ ընկնելու»:* Եվ երբ քայլ եմ անում, որպեսզի կատարեմ այն, ինչը, իմ համոզմամբ, Նա խնդրել է ինձ, Աստված մշտապես գործում է և օգնում է փոխանցել իմ ուղերձը: Նա նույնիսկ մեկ անգամ չի ձախողել ինձ:

Ձեզնից շատերի դեպքում Աստված պարզապես սպասում է, որ ոտք դնեք այդ հույսի խարսխի վրա կամ քայլ անեք: Նա պարզապես սպասում է, որ դուք կատարեք ձեր մասը, որպեսզի Նա կարողանա հայտնվել ձեր կյանքում և այնպիսի բան անել, ինչը կզարմացնի ձեզ:

Թույլ մի՛ տվեք, որ կյանքի հանգամանքները հեռացնեն ձեզ ձեր ընթացքից: Գցե՛ք ձեր խարիսխը և ո՛տք դրեք հույսի հաստատուն հիմքի վրա: Քանի որ, երբ ձեր հույսն Աստծո վրա դնեք, չեք հիասթափվի:

# Գլուխ 2

# Ինչ անել, երբ նույն տեղում եք մնացել

**Պատահել է, որ ասես նույն տեղում մնացած լինեք**: Դուք երբևէ եղե՞լ եք այնպիսի վիճակում, որը փակուղի է թվացել… ասես կյանքում այլևս ոչինչ չեք կարող անել:

Ես շատ անգամներ եմ նման վիճակում եղել և համոզված եմ, որ մարդկանց մեծ մասը՝ նույնպես: Բայց այնքա՜ն շնորհակալ եմ, որ տարիների ընթացքում Աստված սովորեցրել է ինձ, որ նույնիսկ երբ նույն տեղում ենք մնում, չկա այնպիսի իրավիճակ, որը Նա չկարողանա հաղթահարել:

Սկսենք Հովսեփի պատմությունից, որը գրված է Ծննդոց գրքում (տե՛ս Ծննդոց 37-50 գլուխները): Աստվածաշնչում գրված է, որ նա ամենասիրելին էր իր հոր 12 որդիներից, և նրա եղբայրները շատ էին նախանձում նրան այդ պատճառով:

Մի օր Հովսեփը պատմեց եղբայրներին իր տեսած երազը: Երազում նրա եղբայրները խոնարհվում էին իր առջև: Ավելորդ է ասել, որ այդ երազը լավ չընդունվեց:

Արդյունքում, Հովսեփի եղբայրները մտածում

էին, թե ինչպես ազատվեն նրանից: Նախ՝ նրանք մի փոսի մեջ գցեցին նրան, որպեսզի մահանար այդտեղ: Բայց հետո որոշեցին ստրկության վաճառել մի խումբ ճանապարհորդող իսմայելցի վաճառականների, ապա ծրագրեցին, որ համոզեն իրենց հորը, որ Հովսեփը մահացել է:

Հավանաբար, դուք գիտեք, որ այս պատմությունը հաղթանակով է ավարտվում: Հետագայում Հովսեփը դարձավ Փարավոնի առաջին օգնականը, կրկին միավորվեց իր ընտանիքի հետ, և բոլորը ներում ստացան:

Հովսեփի հետ կատարվածն ապացույց է, որ ինչ էլ տեղի ունենա կյանքում, միշտ հույս կա: Դուք կարող եք կատարել Աստծո նպատակը ձեր կյանքում, քանի որ Աստծո համար ամեն ինչ հնարավոր է:

Այնուամենայնիվ, մենք պետք է ուշադրություն դարձնենք Հովսեփի պատմության փոսի և պալատի միջև հատվածին: Հովսեփի կյանքը մի քանի շրջադարձ ունեցավ այդ ընթացքում: Բայց նրա բնավորության գծերից մեկը, որն այդ հաղթական ավարտին հասցրեց նրան, հարատևելու հատկությունն էր: Աստծո հանդեպ ունեցած հավատքի շնորհիվ Հովսեփը երբեք չհանձնվեց:

## ՀԱՆՁՆՎԵԼԸ ՏԱՐԲԵՐԱԿ ՉԷ

Մեր կյանքի ընթացքում կարող ենք ժամանակ առ ժամանակ փոսում հայտնվել: Դա կարող է լինել հիվանդության փոս, ֆինանսական կարիքի փոս,

փոխհարաբերությունների և այլ խնդիրների հետ կապված փուսեր: Երբ դա տեղի ունենա, դուք պետք է որոշում կայացնեք, որ ինչպիսի իրավիճակ էլ լինի, չեք հանձնվելու:

Միշտ հիշե՛ք. որպեսզի բարի վկայություն ունենանք Աստծո գործերի մասին, նախ՝ պետք է անցնենք փորձությունները: Հիսուսը նույնիսկ ասաց.

*«...Աշխարհում դուք նեղություն և փորձություններ և փրփմություն և հիասթափություն կունենաք, բայց քաջալերվե՛ք [խիզախ, վստահ, հաստատուն, անվեհեր եղե՛ք]: Որովհետև Ես հաղթել եմ այս աշխարհը [Ես զրկել եմ այն ձեզ վնասելու ուժից, և Ես նվաճել եմ այն ձեզ համար]» (Հովհաննես 16.33, AMPC):*

Դուք անխուսափելիորեն դժվարություններ կկրեք: Երբեմն ձեզ կթվա, թե ուզում եք հանձնվել: Բայց եթե միայն կարողանաք դիմանալ և վստահել Աստծուն՝ անցնելով այդ ամենով, Նա կվերականգնի ձեզ: Նա կարող է վերցնել բոլոր վատ բաները, որոնք տեղի են ունեցել, և բարուն գործակից դարձնել (տե՛ս Հռոմեացիների 8.28):

Ասում են, որ Ուինսթոն Չերչիլը 1941 թվականին հետևյալ ուղերձն է հղել «Հերոու Սքուլ» դպրոցի շրջանավարտներին.

*«Երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք մի հանձնվեք: Ոչ մի բանում՝ մեծ, թե փոքր, կարևոր, թե անկարևոր, երբեք մի՛ հանձնվեք»:*

Չգիտեմ՝ արդյո՞ք նա ընդամենը այսքանն է ասել, բայց հավատում եմ, որ այսօր Սուրբ Հոգին շատերիս է ուղղում այս խոսքերը. «Մի՛ հանձնվիր, քանի որ Աստված այնքա՜ն բան է պատրաստել քեզ համար»:

Երբ դժվարությունների բախվեք, հնարավոր է, որ հանձնվելու մղում զգաք: Երբեմն մարդիկ նույն տեղում են մնում՝ չտեսնելով ելք իրենց իրավիճակից, և մտածում են, որ ավելի հեշտ կլինի, եթե հանձնվեն:

Գուցե նրանք կարծում են, որ այնքան էլ խելացի կամ տաղանդավոր չեն: Գուցե նրանց հետ ինչ-որ ցավալի իրադարձություն է տեղի ունեցել, նրանք ձախողվել են ինչ-որ հարցում կամ սարսափելի սխալներ են գործել անցյալում:

Բայց Սուրբ Հոգին ուժ և կարողություն է տալիս մեզ, որպեսզի առաջ գնանք, ջանք գործադրենք և հասնենք մեր հաղթանակին, նույնիսկ եթե ամեն ինչ չի ընթանում այնպես, ինչպես ծրագրել էինք:

Ձախողումը չի նշանակում, որ այլևս հնարավորություններ չեն լինելու: Դուք կարող եք սովորել անցյալի սխալներից. ես բացահայտել եմ, որ պատմությունը լավ ուսուցիչ է: Երբ ամեն ինչ ձախողվում է, կրկի՛ն փորձեք: Եթե ոչինչ էլ չստացվի, գոնե կսովորեք, թե ինչն է ստացվում, իսկ ինչը՝ ոչ, և կգործեք դրա համեմատ: Դուք կարող եք հնարավորության վերածել ձեր խոչընդոտը, ավելի իմաստուն և հոգևորապես ավելի հասուն դառնալ:

Աստված ցանկանում է, որ մենք լավ կյանք ունե-

նանք. այնուամենայնիվ, վստահելը և հարատևելը պարտադիր պայման է: Սուրբ Հոգին քայլ առ քայլ կառաջնորդի մեզ այն բարի ծրագրերի մեջ, որոնք Աստված ունի յուրաքանչյուրիս համար: Մեր գործն է անել այդ քայլերը… *և երբե՛ք չհանձնվել:*

## ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԵՔ

Փոսի մեջ եղած ժամանակ էլ ձեր վերաբերմունքը կարող է մեծ փոփոխության պատճառ դառնալ:

Հիշեք՝ դա փորձության ժամանակ է… ժամանակ, երբ զարգանում է ձեր բնավորությունը: Ես երբեմն անվանում եմ այս շրջանը «լուռ տարիներ», քանի որ այս ընթացքում կարող է թվալ, թե ձեր կյանքում շատ բան տեղի չի ունենում:

Կամ, գուցե, դուք անցնում եք բազում ցավերով և ցնցումներով, և ձեզ թվում է, թե Աստված որևէ կերպով չի միջամտում:

Բայց անչափ կարևոր է, որ վստահեք Նրան այս ընթացքում, քանի որ Նա գործում է ձեր սրտում, որպեսզի դարձնի ավելի նման Քրիստոսին:

**Այսպիսով, ի՞նչ պետք է անեք, երբ ձեր փոսում եք մնացել:**

- *Մի՛ հանձնվեք:* Հակառակվե՛ք այն գայթակղությանը, որը դրդում է մտածել, որ ձեր իրավիճակից ելք չկա: Հիսուսն է Ճանապարհը: Սա այն

ժամանակն է, երբ պետք է մոտենաք Աստծուն և հետևեք Նրան:

- *Մի՛ մեղադրեք Աստծուն և մի՛ մտածեք, որ Նա պատժում է ձեզ ինչ-որ մեղքի համար:* Նա պարզապես օգտագործում է այդ իրավիճակը, որպեսզի աշխատանք կատարի ձեր կյանքում: Ու թեև դա միշտ չէ, որ հաճելի է, Նրա նպատակը մշտապես բարի է:
- *Ճի՛շտ վարվեք, նույնիսկ երբ ցավ եք զգում, երբ ամեն ինչ սխալ է թվում, կամ երբ մարդիկ վատ են վերաբերվում ձեզ:* Բարի՛ք արեք հնարավորինս շատ մարդկանց և այնքան հաճախ, որքան կարող եք:
- *Մի՛ առանձնացեք, մի՛ մռայլվեք և մի՛ մեկուսացեք մարդկանցից:* Հիշե՛ք՝ դուք կարող եք թշվառ կամ ուժեղ լինել, բայց չեք կարող լինել երկուսը միաժամանակ: Աստված հաճախ կօգտագործի մարդկանց, որպեսզի խրախուսի ձեզ այս ընթացքում:
- *Պահե՛ք ձեր խոսքը և պատվե՛ք ձեր խոստումները:* Սա բնավորություն կառուցելու ժամանակ է, և դուք պատրաստություն եք անցնում, որպեսզի զբաղեցնեք ձեր տեղը «պալատում»:
- *Մի՛ դադարեք հավատալ…* Մի՛ թողեք այն հույսը, որ Աստված կարող է բարելավել ձեր իրավիճակը:

## ԹԱ՛Փ ՏՎԵՔ ԴԱ ՁԵԶՆԻՑ

Հավանաբար, դուք լսել եք պատմությունը այն ավանակի մասին, որը փոսի մեջ էր ընկել:

Տեսնելով դա՝ նրա տերը որոշ ժամանակ մտածեց և որոշեց, որ փոսը շատ խորն է, իսկ ավանակն արդեն շատ ծեր է, և վճռեց թաղել նրան այդ փոսի մեջ:

Նա օգնության կանչեց իր ընկերներին և հարևաններին, և նրանք բահերով հող լցրին փոսը:

Սկզբում ավանակը սկսեց բարձր ձայնով խառնանչել՝ ակնհայտորեն սարսափելով իր իրավիճակից: Քիչ անց, սակայն, նրա տերը նկատեց, որ ավանակը լռեց, և մտածեց, որ հավանաբար, արդեն սատկել է: Բայց ավանակը չէր սատկել:

Փոսի մեջ նայելով՝ նրա տերը տեսավ, որ ամեն անգամ, երբ նրա մեջքին հող էր լցվում, ավանակը թափ էր տալիս դա իրենից և դոփում էր դրա վրա՝ պնդացնելով հողն իր սմբակների տակ: Դա ժամեր տևեց, մինչև որ ավանակը վերջապես այնքան հող պնդացրեց, որ կարողացավ վեր բարձրանալ և դուրս գալ փոսից:

Մենք կարող ենք սովորել այդ ավանակից: Ժամանակ առ ժամանակ կյանքը հող է լցնելու մեզ վրա: Գուցե դա վերաբերի մեր հարաբերություններին, ֆինանսներին կամ առողջությանը: Նման դեպքերում մենք պետք է սովորենք հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը: Նա ցույց կտա ձեզ, թե ինչպես թափ տաք այդ հողը ձեզնից և վեր բարձրանաք՝ հայտնե-

լով ձեզ գալիք բարի բաները ամեն քայլի հետ, որը դուք կանեք ձեր փոսից դեպի ձեր պալատը:

Մշտապես կլինեն խոչընդոտներ, որոնք կարիք կլինի հաղթահարել: Մշտապես կլինեն խնդիրներ, որոնք պետք է լուծել: Բայց կլինեն նաև վերափոխումներ, երկրորդ հնարավորություններ և նոր սկզբեր:

Երբեք ուշ չէ. միայն թե մի՛ հանձնվեք: Երբ կատարեք ձեր մասը և անեք այն, ինչ կարող եք, երբ հարեք հույսին, առաջ գնաք և հրաժարվեք թողնել Աստծուն ապավինելը, Նա հավատարմորեն կանի այն, ինչ դուք չեք կարող:

Այսպիսով, եթե դուք նույն տեղում եք մնացել և չգիտեք՝ ինչ անեք, մի՛ հուսալքվեք, քանի որ դուք գերազանց դիրքում եք՝ նոր սկզբի համար:

# Գլուխ 3

# Հույսով լեցուն վերաբերմունք ընտրեք

**Քանի որ երեխա ժամանակ ես բռնության էի ենթարկվել**, իմ ներսում անորոշ վախ էր ձևավորվել՝ որ մշտապես ինչ-որ վատ բան է տեղի ունենալու: Գուցե հասկանաք, թե ինչ նկատի ունեմ:

Ինձ հետ այնքան վատ բաներ էին կատարվել, որ ես մշտապես ինչ-որ վատ բանի էի սպասում, նույնիսկ քրիստոնյա դառնալուց հետո:

Ես հիշում եմ այն առավոտը, երբ վերջապես աղոթեցի ու հարցրի Աստծուց. «Ի՞նչ է սա: Ինչո՞ւ եմ միշտ այսպես զգում ինձ»:

Աստված խոսեց սրտիս. «Դու չար կանխազգացումներ ունես»: Նախկինում ես երբեք չէի լսել այդ մասին, բայց մի քանի օր անց գտա դա Առակաց 15.15-ում.

*«Թշվառ և փառայյալ մարդու բոլոր օրերը չար են [անհանգիսփ մփքերի և կանխազգացումների պատճառով], բայց նա, ով ուրախ սիրփ ունի, մշփական խնջույքի մեջ է [անկախ հանգամանքներից]» (AMPC):*

Մենք բախվելու ենք դժվարությունների կյանքում,

և երբ դա տեղի ունենա, հնարավոր է, որ սկսենք վախենալ ապագայից, նաև անհանգիստ մտքեր և կանխազգացումներ ունենանք: Բայց պետք է այնպիսի վերաբերմունք ձևավորենք մեր մեջ, որ սովորենք համաձայնել Աստծո և Նրա Խոսքի հետ նեղության պահին:

Մենք կարող ենք գործի դնել մեր հավատքը՝ ասելով. «Ես գիտեմ, որ Աստված սիրում է ինձ: Նա կհոգա իմ մասին և կպաշտպանի ինձ: Ես հավատում եմ, որ Նա շնորհք և ուժ կտա ինձ՝ այն բանի համար, ինչ պետք է անեմ, և դրա արդյունքը բարի կլինի»:

## ՄԻ՛ ՍԱՐՍԱՓԵՔ

Աստված ոչ մի դեպքում չի նախատեսել, որ մենք թշվառ վիճակում լինենք կամ «ծանր օրեր» անցկացնենք, նույնիսկ երբ ամեն ինչ մեր ուզածով չի ստացվում: Նա ցանկանում է, որ մենք բարի բաներ ակնկալենք և հույսով լեցուն մնանք՝ անկախ հանգամանքներից:

Այս երկու բառերը կօգնեն ձեզ այդպես վարվել. «Մի՛ սարսափեք»:

Ի՞նչ է սարսափը: Սարսափը պարզապես բացասական իրավիճակների սպասում է, որը հույսի ճիշտ *հակառակն* է:

Կարծում եմ՝ շատերը սարսափով են անցկացնում իրենց օրը՝ նույնիսկ առանց գիտակցելու: Մենք կարող ենք սարսափով աշխատանքի գնալ, խցանման

մեջ լինել, ափսեները լվանալ, լվացք անել, սիզամարգը կտրել, ճաշ պատրաստել և այլն:

Սակայն սարսափը կարող է գողանալ մեր ուրախությունը և փչացնել մեր օրը: Սարսափը կարող է հուսալքված դարձնել մեզ: Փոխարենը, խրախուսում եմ ձեզ, որ այլևս թշվառության զգացում չունենաք այն ամենի պատճառով, ինչը դուք չեք կարող փոխել: Որոշե՛ք ուրախ լինել և թույլ տվե՛ք, որ Աստված հոգա այդ ամենի մասին:

Յուրաքանչյուր իրավիճակում մենք պետք է այսպիսի վերաբերմունք ունենանք. «Ես կարող եմ անել այն, ինչ պետք է անեմ, և չեմ դադարի վայելել իմ կյանքը՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում: Ես չէի ծրագրել, որ այսպես լիներ, բայց գիտեմ, որ Աստված կարող է փոխել ամեն ինչ հօգուտ ինձ»:

Ես չեմ ասում, որ ամեն անգամ, երբ այդպես վարվեք, ձեր խնդիրները կհեռանան: Այնուամենայնիվ, եթե որոշեք չսարսափել, ձեր կյանքն, անկասկած, ավելի կբարելավվի:

## ՈՒՐԱԽՈՒԹՅՈ՛ՒՆ ԳՏԵՔ ՓՈՔՐ ԲԱՆԵՐՈՒՄ

Հաղթական կյանք ունենալը չի վերաբերում միայն կյանքի «մեծ» բաներին. այն սկսվում է փոքր բաներից: Տերը ցանկանում է, որ մենք հաջողություն և ուրախություն ունենանք մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում, և սարսափը հաղթահարելը անչափ

կարևոր է դրա համար: Դրական և հույսով լեցուն վերաբերմունք ունենալու որոշումը բառացիորեն կարող է մեծ փոփոխություն առաջացնել:

Անկասկած, կյանքում կլինեն այնպիսի բաներ, որոնք ավելի դժվար են և պակաս հաճելի, սակայն դրանք չպետք է թշվառության զգացում առաջացնեն մեր մեջ կամ փչացնեն մեր օրը: Իրականում, մենք ենք որոշում, թե ինչպիսի վերաբերմունք ունենանք:

Զարմանալի է, թե ինչպես մենք, ինքնախղճահարություն զգալով, կարող ենք թույլ տալ, որ մեր վերաբերմունքը փչացնի մեր և ուրիշների գերազանց օրը: Վստահե՛ք ինձ, ես գիտեմ, թե ինչ եմ ասում. ես շատ լավ էի «նահատակի» դեր կատարում, երբ պետք է տնային գործեր անեի:

Ես հաճախ էի դժգոհությամբ քայլում տնով մեկ և մրթմրթում. «Բոլորն իմ շուրջը սպասում են, որ ինչ-որ բան անեմ: Դեյվը գոլֆ է խաղում, իսկ երեխաներն անկարգություններ են անում: Ես ամբողջ օրը կերակուր եմ պատրաստում նրանց համար, լվանում եմ նրանց ափսեները և հագուստը: Իսկ ո՞վ է հոգում իմ մասին»:

Ճշմարտությունն այն է, որ ոչ ոք չէր ստիպում ինձ անել դա: Ես էի որոշել անել դա, քանի որ սիրում եմ իմ ընտանիքը: Այնուամենայնիվ, ես հազվադեպ էի վայելում իմ օրը, քանի որ վճռականորեն տրամադրված էի բացասական վերաբերմունք ունենալուն:

Սա ծանո՞թ է թվում ձեզ: Գուցե ձեր խնդիրը տնային գործերը չեն, բայց բոլորս ենք գայթակղվում, որ

ինքնախղճահարություն զգանք կամ սարսափենք ինչ-որ բանից մեր կյանքի տարբեր պահերին:

Նույնիսկ երբ մեզ հետ վատ և անհարմարավետ բաներ են տեղի ունենում, մենք, միևնույն է, կարող ենք որոշել, որ դրականորեն ենք արձագանքելու: Երբ այդպես ենք վարվում, մենք համաձայնում ենք Աստծո հետ, քանի որ Աստված միշտ դրական է:

## ԿԵՆՏՐՈՆԱՑԵ՛Ք ԴՐԱԿԱՆԻ ՎՐԱ

Ես հաճախ եմ խրախուսում մարդկանց «Ուրախության խաղ» խաղալ: Ի՞նչ է այն: Երբ դուք բացասական իրավիճակի եք բախվում, հաստատ որոշում կայացրեք, որ տեսնելու եք դրա հնարավոր դրական կողմերը:

Օրինակ, եթե խցանման մեջ եք ընկել, ասե՛ք. «Ես դանդաղ եմ առաջ գնում և ուշանում եմ, բայց գուցե Աստված պաշտպանում է ինձ ավտովթարից, որը տեղի կունենար, եթե ավելի արագ ընթանայի»:

Սա վերաբերում է յուրաքանչյուր իրավիճակին՝ մեծ, թե փոքր: Նույնիսկ այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին աշխատանքի կորուստն է, դուք կարող եք որոշել ուղղել ձեր ուշադրությունը դրականին և ասել. «Գուցե ես զրկվեցի աշխատանքից, բայց հիմա հնարավորություն ունեմ տեսնելու, թե ինչպես է Աստված տալու ինձ ավելի լավ աշխատանք, քան այն, որ ունեի»:

Աստվածաշնչում գրված է.

*«…Տերը [եռանդուն կերպով] սպասում է [ակնկալում է, փնտրում է և ձգտում է], որ ողորմած լինի ձեր հանդեպ… որ Նա գթա ձեզ և Իր սիրով լի կարեկցանքը ցուցաբերի ձեր հանդեպ…»* (Եսայի 30.18, AMPC):

Անկախ այն բանից, թե ինչ է բերում կյանքը ձեր ճանապարհին, Աստված ծրագրում է բարելավել այն, և Նրա ծրագիրը լի է հույսով ու բարիքներով: Ես խրախուսում եմ, որ համաձայնեք Նրա հետ:

Մոտեցե՛ք յուրաքանչյուր օրվան դրական, հույսով լի վերաբերմունքով և որոշում կայացրեք, որ չեք սարսափելու: Ես հավատում եմ՝ երբ այսպես վարվեք, դուք ուրախություն կգտնեք ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում:

# Գլուխ 4

# Վստահե՛ք Աստծուն, երբ փորձությունների միջով եք անցնում

**Տարիների ընթացքում ես հասկացա, որ այլ բան է վստահել Աստծուն ինչ-որ հարցում՝** որ Աստված փոխի ինչ-որ իրավիճակ կամ ինչ-որ մարդու մեր կյանքում, և լիովին այլ բան է վստահել Աստծուն՝ դժվարություններով անցնելիս:

Ես մեծ մխիթարություն եմ ստանում Եսայի 43.2,3 խոսքերից: Գրված է. *«Երբ որ ջրերից անցնես, Ես քեզ հետ եմ, և եթե գետերով, նրանք քեզ չեն ողողի: Երբ որ գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չպիտի վառի: Որովհետև Ես՝ Տե՛րս, քո Աստվածն եմ»:*

Երբ դժվարություններով եք անցնում, անչափ կարևոր է հիշել, որ Աստված ձեր կողքին է, և դուք կարող եք վստահել, որ Նա կօգնի ձեզ անցնել դրանցով:

Օրինակ, գուցե դժվար լինի հավատքի մեջ մնալ, երբ ձեր հանգամանքներն անհասկանալի են, կամ երբ կյանքն անարդար է թվում: Հատկապես դժվար է այն դեպքում, երբ, ձեր կարծիքով, դուք անում եք ճիշտ այն, ինչ պետք է անեք, և համապատասխան արդյունք չեք ստանում:

Դուք նաև կարող եք տեսնել ինչ-որ մեկին, ով ճիշտ չի վարվում, սակայն, թվում է՝ նրա ձեռքբերումներն ավելին են, քան ձերը: Ձեր կյանքում կլինեն ժամանակներ, երբ ձեզ կթվա, թե ամեն ինչ սասանվում է, և ոչ մի տեղ ապահովություն չկա, և միակ իրական պատասխանը կլինի Աստծուն վստահելը, շարունակ Նրան վստահելը:

Ես նույնպես հասկացել եմ իմ փորձից, որ Աստված կօգտագործի այս ժամանակները մեր օգտի համար: Երբ կյանքն անկայուն է թվում, Նա օգտագործում է մեր հանգամանքները, որպեսզի օգնի մեզ ավելի մոտենալ Իրեն և ամուր հարել մեր Փրկության Վեմին՝ Հիսուս Քրիստոսին, Ով չի շարժվում և չի սասանվում (տե՛ս Սաղմոս 62.2,6):

## ՀՈԳԵՎՈՐ ԱՃ՝ ԴԺՎԱՐԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ ԱՆՑՆԵԼԻՍ

Գուցե տարօրինակ թվա, բայց ես այն համոզման եմ, որ փորձությունները և դժվարությունները կարող են մեր լավագույն ընկերները լինել: Ինչո՞ւ: Քանի որ Տերն օգտագործում է դրանք, որպեսզի սովորեցնի, մարզի և օգնի մեզ աճել այնպես, ինչպես որ ինքնուրույն չէինք կարողանա:

Հակոբոս 1.2,3-ում գրված է. *«Բոլորովին ուրախություն համարե՛ք, եղբայրնե՛րս, երբ որ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում»:*

Փորձությունները և տառապանքներն Աստծուց չեն բխում, բայց Նա կօգտագործի դրանք, որպեսզի ավելի ուժեղ դարձնի մեզ և օգնի ավելի խաղաղ, կայուն և բավականություն պատճառող կյանք վայելել:

Կյանքի դժվարությունները մեզ դարձնում են այնպիսի մարդիկ, ինչպիսին ցանկանում ենք լինել: Երբ բախվում ենք այնպիսի իրավիճակների, որոնք «մեզնից վեր» են, դա օգնում է մեզ կախվածության մեջ հայտնվել Նրանից, քանի որ հասկանում ենք, որ չենք կարող լուծել մեր բոլոր խնդիրները:

Տերը ցանկանում է, որ մոտենանք Իրեն՝ ուժ ստանալու համար, և այնպիսին դառնանք, որ կարողանանք կայուն մնալ նույնիսկ դժվարությունների բախվելիս: Նա ցանկանում է, որ մենք ուրախ և գոհ լինենք Նրանում, նույնիսկ երբ մեր հանգամանքները գերազանց չեն (տես Նեեմիա 8.10):

Ինչպես որ ադամանդներն են ձևավորվում մեծ ճնշման ներքո, Աստված հաճախ օգտագործում է մեր կյանքի դժվարությունները, որպեսզի խոնարհեցնի մեզ, ձևավորի մեր բնավորությունը, վերափոխի մեզ Իր պատկերի նմանությամբ... և պատրաստի այն բարի բաների համար, որոնք որոշել է մեզ համար ապագայում:

## ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ՄԵԶ ՎՍՏԱՀԵԼ

Աստծուն վստահելու մեջ անասելի ազատություն կա: Երբ ինչ-որ բան մեր սպասվածի պես տեղի չի ունենում, բարկանալու կամ վիրավորվելու փոխարեն կարող ենք վստահել, որ Նրա ծրագիրը մեր ծրագրից ավելի լավն է, և որ Նա ի վերջո կփոխի մեր իրավիճակը հօգուտ մեզ (տե՛ս Հռոմեացիների 8.28):

Մենք պետք է հասկանանք սա, քանի որ երբեմն, երբ նեղության մեջ ենք, մենք կարող ենք վիրավորվել Աստծուց կամ այլ մարդկանցից, որոնք օրհնվում են: Մենք կարող ենք ինքնաարդարացի վերաբերմունք ունենալ, որն ասում է. «Ես ավելի լավ քրիստոնյա եմ, քան դու: Ե՛ս եմ արժանի այդ օրհնություններին»:

Օրինակ, գուցե դուք ուզում եք առաջխաղացում ստանալ աշխատանքի վայրում, բայց այլ մարդ է ստանում այն: *Ի՞նչ պետք է անեք:*

Դուք կարող եք վիրավորվել և ինքնաարդարանալ և լրջորեն վնասել ձեզ՝ հոգևոր իմաստով: Կամ՝ դուք կարող եք վստահել Աստծուն և ասել. «Տե՛ր, եթե ցանկանում ես, որ հենց հիմա ես այստեղ լինեմ, ես կժպտամ և կծառայեմ իմ տնօրենին: Եվ գիտեմ, որ եթե Դու ցանկանաս տեղափոխել ինձ, կարո՛ղ ես անել դա՝ Քո կողմից որոշված ճիշտ ժամանակին»:

Ես հասկացել եմ, որ Աստված մեզնից ավելի խելացի է: Երբեմն Նա ուշացումով է տալիս մեր ուզածը,

քանի որ այլ ծրագիր ունի, որն ավելի լավն է, քան այն, ինչ մենք կարող էինք պատկերացնել:

Օրինակ, շատ անգամներ Տերը թույլ է տվել ինձ դժվարություններ կրել որոշ իրավիճակներով անցնելիս: Երբեմն դա անչափ դժվար է եղել, հատկապես երբ տեսնում էի, որ այլ մարդիկ ավելի արագ էին ճեղքում ունենում նույն բնագավառներում:

Բայց երբ Աստված թույլ է տալիս ինձ այդ ճանապարհով անցնել, Նա ցանկանում է, որ ես վերապրեմ և հասկանամ, թե ինչով են անցնում այլ մարդիկ, որպեսզի կարողանամ զգալ նրանց ցավը և օգնել բարեհաջող անցնել:

Եթե չլինեին կյանքիս դժվարությունները՝ այն հանգամանքները, որոնք Տերն օգտագործում էր, որպեսզի օգներ ինձ աճել և փոխվել, ես ոչ մի դեպքում չէի կարողանա օգնել այն մարդկանց, որոնց օգնում եմ այսօր:

Աստված երբեք նեղություններից ազատ կյանք չի խոստացել, բայց, անկասկած, խոստացել է, որ երբեք չի թողնի և չի լքի մեզ (տե՛ս Եբրայեցիների 13.5): Դժվարին պահերին մենք կարող ենք մխիթարվել՝ իմանալով, որ Նա անասելիորեն սիրում է մեզ և արդեն իսկ ծրագիր ունի՝ մեզ օգնելու համար:

# ԱՍՏՎԱԾ ՁԵԶ ՀԵՏ Է ԱՄԲՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուզում եմ խրախուսել ձեզ, որ հաստատ որոշում կայացնեք, որ ձեր կյանքի յուրաքանչյուր փուլը կվստահեք Աստծուն: Երբ կյանքի փոթորիկների հարվածն եք կրում, կամ երբ վերապրում եք այնպիսի բաներ, որոնք չեք հասկանում, դուք պետք է որոշեք վստահել Նրան՝ անկախ այն բանից, թե ինչ եք մտածում կամ զգում, և անկախ այն բանից, թե ինչպիսին են ձեր հանգամանքները:

Երբ վստահեք Աստծուն ձեր փոթորկի ընթացքում, Նա կշնորհի ձեզ այն, ինչն իրականում կայունություն է տալիս. *Նա կշնորհի ձեզ Իրեն՝ ավելի մեծ չափով:*

Դուք այսօր անցնում եք դժվարությամբ: Արդյո՞ք այնպիսի փորձությամբ եք անցնում, որն անհաղթահարելի է թվում: Եթե՝ այո, առաջարկում եմ հենց հիմա մի պահ կանգ առնել և աղոթել.

*«Տե՛ր, շնորհակա՛լ եմ, որ միշտ ինձ հետ ես՝ թե՛ լավ պահերին, թե՛ այն ժամանակ, երբ կյանքը դժվարանում է: Խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ մոտենալ Քեզ, երբ ամեն ինչ անհասկանալի է թվում: Ես վստահո՛ւմ եմ Քեզ և գիտեմ, որ Դու կօգտագործես այդ ամենը հօգուտ ինձ: Աղոթում եմ Հիսուսի անունով: Ամե՛ն»:*

Հիշեք՝ այն, ինչով անցնում եք, ընդմիշտ չի լինելու: Երբ իմ կյանքում դժվարություններ են լինում, ես սիրում եմ հիշեցնել ինքս ինձ. «Սա նույնպես կանց-

նի»: Միևնույն ժամանակ, դուք կարող եք որոշում կայացնել, որ վստահելու եք Աստծուն և թույլ եք տալու, որ Նա ուրախություն շնորհի ձեզ այն իրավիճակում, որով անցնում եք:

Նույնպես, դուք ճիշտ կվարվեք, եթե հարատևեք Աստծո Խոսքի մեջ և խրախուսեք ձեզ Եսայի 41.10-ի խոսքերով: Աստված ասում է. *«Մի՛ վախեցիր [վախենալու ոչինչ չկա], որովհետև Ես քեզ հետ եմ: Մի՛ նայիր քո շուրջը սարսափով և մի՛ ահաբեկվիր, որովհետև Ես քո Աստվածն եմ: Ես կզորացնեմ քեզ և դժվարությունների հանդեպ դիմացկուն կդարձնեմ, այո՛,* ***Ես կօգնեմ քեզ****…»* (AMPC):

Ինչով էլ հենց հիմա անցնում եք, ես խրախուսում եմ ձեզ, որ հաստատուն մնաք և չհանձնվեք: Որոշում կայացրեք, որ դրական վերաբերմունք եք ունենալու և շարունակելու եք վստահել Աստծուն: Հիսուսը ձեզ հետ է յուրաքանչյուր փոթորիկով անցնելիս, և երբ ձեր փոթորիկն ավարտվի, դուք ավելի ուժեղ դարձած կլինեք:

# Գլուխ 5

# Ամեն ինչ՝ նոր

**Երբ հիասթափվում եք և անհուսություն եք զգում, անչափ օգտակար է հիշել, թե ինչպես է Տերն օգնել ձեզ անցյալում**: Դուք նույնպես կխրախուսվեք, եթե հիշեք Նրա հավատարմությունն այլ մարդկանց հանդեպ՝ ձեզ պես մարդկանց, որոնք հուսահատորեն Աստծո օգնության կարիքն ունեին:

Դուք երբևէ մտածե՞լ եք այն մարդկանց մասին Աստվածաշնչում, որոնց Աստված նոր սկիզբ է տվել:

**Մովսեսը** տարեց էր, մինչև որ հանդիպեց Աստծուն վառվող մորենու մոտ և կանչվեց Աստծո կողմից՝ մի ամբողջ ազգ առաջնորդելու համար: Մինչև այդ, նա 40 տարի թաքնվում էր անապատի խորքերում: Նա նույնիսկ գաղափար չուներ, թե ինչ էր Աստված ծրագրել (տե՛ս Ելից 1-4 գլուխները):

**Դավիթը**՝ համեստ գառնարած տղան, օծվեց որպես Իսրայելի թագավոր: Նա, ըստ էության, անհայտ անձնավորություն էր անհայտ վայրից՝ վերջին մարդը, որին կարելի էր թագավոր ընտրել: Բայց Աստված գործածեց նրան՝ Իր ժողովրդին առաջնորդելու համար (տե՛ս Ա Թագավորաց 16-րդ գլուխը):

**Պետրոսը**՝ այն առաքյալը, որն ուրացավ Քրիստոսին, ներվեց և կանչվեց Աստծո մասին քարոզելու և

Նրան փառավորելու համար մինչև կյանքի ավարտը (տե՛ս Ղուկաս 22.54-62, Հովհաննես 21-րդ և Գործք 3-րդ գլուխները):

Եվ **Պողոսը**, որը մի ժամանակ հալածում էր Աստծո ժողովրդին, փոխվեց Դամասկոսի ճանապարհին և դարձավ Նոր կտակարանի մեծ մասի հեղինակը (տե՛ս Գործք 9.1-22):

Երբ մտածում եք բոլոր այն մարդկանց մասին ամբողջ Աստվածաշնչում, որոնց Աստված ներեց, փրկագնեց և զորավոր կերպով գործածեց, մի՞թե կասկածում եք, որ Աստված կարող է անել նույնը ձեզ համար:

Մեր Աստված հույսի Աստված է: Նա վերափոխումների, երկրորդ հնարավորությունների և նոր սկզբերի Աստված է: Եվ Նա չի սահմանափակում այն, թե քանի անգամ դրանք կարող են շնորհվել ձեզ:

## ՆԱՅԵՔ ՀՈՒՅՍԻ ԱՉՔԵՐՈՎ

Հիշեք՝ հույսն անձի խարիսխն է: Երբ ամեն ինչ մթագնած է թվում, և մենք պատասխան չունենք, գալիս է հույսը՝ հիշեցնելու, որ մեր նոր սկիզբը սպասում է մեզ հաջորդ շրջադարձին:

Երբ թվում է, թե բոլորն օրհնվում են, իսկ մենք հոգնած ենք և ուզում ենք հանձնվել, հույսն է, որ հաստատում է մեր սիրտը և օգնում է ամուր բռնել Աստծո խոստման հանդեպ հավատքը:

Կրկին, հույսը դրական և վստահ սպասում է: Այն դրական վերաբերմունք է և ուրախ ակնկալիք, որ ինչ-որ լավ բան է տեղի ունենալու:

Իրական հույսը երազկոտ և անորոշ վերաբերմունք չէ, որն ասում է. «Եկեք պարզապես սպասենք և տեսնենք, թե ինչ է լինելու»: Իրական հույսը հավատում և վստահում է, որ Աստված կկատարի այն, ինչ խոստացել է: Աստված պարզապես հնարավորություններ է փնտրում Իր զավակներին բարություն անելու համար, և Նա ցանկանում է, որ մենք ակնկալենք դա և անհամբեր սպասենք դրան:

Թեսաղոնիկեցիների Առաջին թղթի 5.8-ում հույսը պատկերվում է որպես սաղավարտ: Նշանակում է՝ մեր մտքերն անչափ կարևոր են: Մեր վերաբերմունքը և սպասումները լիովին կախված են այն բանից, թե ինչ ենք մտածում և խոսում:

Ես խրախուսում եմ ձեզ, որ ամեն առավոտ առաջին հերթին որոշում կայացնեք վերահսկել ձեր մտքերը և խոսքերը: Երբ առավոտյան արթնանում եք, մի՛ համակերպվեք այսպիսի մտքերին. «Կարծում եմ՝ այսօր սովորական օր է, և ես կփորձեմ մի կերպ անցկացնել այն»:

Փոխարենը, բարի բաներ ակնկալեք Աստծուց: Մտածե՛ք և հռչակե՛ք այսպիսի խոսքեր.

*«Աստվա՛ծ, շնորհակա՛լ եմ Քեզ այսօրվա համար: Ես գիտեմ, որ Դու սիրում ես ինձ և բարի ծրագիր ունես*

*ինձ համար այսօր: Առանց Քեզ ես ոչինչ չեմ կարող, բայց Քրիստոսում ես կարող եմ այն, ինչ պետք է կատարեմ: Եվ Քո օգնությամբ իմ վերաբերմունքը և մտքերը դրական կլինեն»:*

Ապա սպասե՛ք ձեր ճեղքմանը և նոր սկզբին: Ասե՛ք. «Այսօր կարող է այդ օրը լինել»:

Կարևոր է գիտակցել, որ մենք չենք կարող ապրել մեր զգացմունքներով, եթե ցանկանում ենք դրական, հույսով լեցուն կյանք ունենալ: Եթե մենք տեղի չտանք բացասական զգացումներին և չսնուցենք դրանք, այդ զգացումները կմահանան:

Այնպես որ, թույլ մի՛ տվեք ձեզ ընկնել այն թակարդը, որում մարդիկ սպասում են, թե ե՛րբ հույսով լեցուն կզգան իրենց. փոխարենը, որոշե՛ք հույսով լեցուն լինել: Երբ գիտակցաբար որոշում կայացնեք, որ ամբողջ օրվա ընթացքում դրական և հավատքով լեցուն մտքեր եք ունենալու, ձեր զգացմունքներն ի վերջո կհետևեն ձեր որոշմանը:

## ԴՈ՛ՒՐՍ ԵԿԵՔ ՁԵՐ ՎՐԱՆԻՑ

Մի քանի տարի առաջ հարցրի Տիրոջը. «Ինչո՞ւ իմ կյանքում այլևս ոգեշնչող և հատուկ բաներ տեղի չեն ունենում»: Տերը խոսեց սրտիս. «Ջո՛յս, Ես միշտ եմ այդպիսի բաներ անում: Պարզապես դրանք սովորական են դարձել քեզ համար»:

Աստված ցանկանում է, որ մեր կյանքում զարմա-

նանք Նրա բարությամբ... որպեսզի ուշադրություն դարձնենք այն հրաշալի գործերին, որոնք անում է մեր կյանքում: Ինչո՞ւ: Քանի որ, երբ զարմանքով ենք ապրում, երբեք չենք կորցնի մեր հույսը: Դիտարկենք Աբրահամի պատմությունը...

Աստված առատորեն օրհնել էր Աբրահամին: Այնուամենայնիվ, կար մի բան, որը նա և կինը՝ Սառան, չունեին. երեխա: Աբրահամն ասաց. *«..Տե՛ր Աստված, ի՞նչ կարող ես տալ ինձ, քանի որ ես անզավակ եմ գնում [այս աշխարհից]»:*

*«Եվ Նա [Աստված] դուրս հանեց նրան [նրա վրանից՝ աստղային լույսի մեջ] և ասաց. «Նայի՛ր դեպի երկինք և հաշվի՛ր աստղերը, եթե կարող ես հաշվել դրանք»: Եվ Նա ասաց նրան. «Այսպես են լինելու քո սերունդները»»* (Ծննդոց 15.2,5, AMPC):

Թեև Աբրահամի հանգամանքներն անհաղթահարելի էին թվում, Տերը դուրս հանեց Աբրահամին նրա վրանից, որպեսզի զարմացներ նրան և հիշեցներ, որ Ինքը կարող է անել անհնարինը:

Ես հավատում եմ, որ մենք կարող ենք չափազանց շատ ժամանակ անցկացնել «մեր վրանում»՝ մեր խնդիրներին նայելով: Ահա թե ինչու է Աստվածաշունչը պատվիրում հեռացնել մեր հայացքն այս կյանքի շեղող հանգամանքներից և ուղղել մեր ուշադրությունը Հիսուսին՝ մեր հավատքի Զորագլխին և Կատարողին (տես Եբրայեցիների 12.2):

Ամեն անգամ, երբ որոշում ենք աղոթել, կարդալ Նրա Խոսքը կամ պարզապես մտորել այն մեծ բաների շուրջ, որոնք Նա արել է անցյալում, մեզանում հույս է ծնվում: Եվ, ինչպես Աբրահամը, շուտով մենք սկսում ենք մտածել. «Գուցե Նա կարո՛ղ է անել դա ինձ համար»:

Երբ դժվարին ժամանակներով եք անցնում և հուսալքված եք զգում ձեզ, ժամանակն է դուրս գալ վրանից և տեսնել, թե ինչ է Աստված ցանկանում ասել: Երբ անեք դա, դուք կտեսնեք, որ Նա սպասում է՝ ձեզ զարմացնելու համար:

## ԿՐԿՆԱԿԻ ՉԱՓ՝ ՁԵՐ ՆԵՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ինձ նման եք, հեշտորեն եք կարողանում հուսալ այլ մարդկանց համար: Ինձ համար բոլորովին դժվար չէ տեսնել դրական կողմը դիմացինի իրավիճակում և խրախուսել նրան՝ ասելով. «Ամեն ինչ կստացվի. միայն վստահի՛ր Աստծուն, և Նա կփոխի քո իրավիճակը»:

Իսկ երբ դա վերաբերում է մե՞զ: Այդ դեպքում, ամեն ինչ այլ է: Երբ ցավոտ և փիատեցնող իրավիճակում ենք, մենք գայթակղված ենք տեղի տալու այսպիսի մտքերի. *«Ամեն ինչ ավարտված է: Ինձ համար արդեն շատ ուշ է»:*

Բայց մեզ համար շատ ուշ չէ: Երբեք շատ ուշ չէ նոր սկզբի համար, երբ ձեր կյանքը Քրիստոսում է: Ձեր

անցյալը՝ ձեր ճակատագիրը չէ: Եթե դուք հրաժարվեք թողնել հույսը և թույլ տաք Սուրբ Հոգուն առաջնորդել ձեզ, Աստված ոչ միայն կվերականգնի այն, ինչ դուք ունեիք, այլև ավելի կբարելավի ձեր կյանքը:

Ես սիրում եմ Հովել 2.25,26-ի այս հատվածը: Երբ կարդաք այս խոսքերը, սրտանց ընդունե՛ք այն, ինչ գրված է: Ընդունե՛ք այս խոսքերն այսօր:

*«Եվ Ես կվերականգնեմ կամ կվերադարձնեմ ձեզ այն փարիները, որ մորեխը կերել է՝ ցատկող մորեխը, սպառող մորեխը և սողացող մորեխը՝ Իմ մեծ բանակը, որը Ես ուղարկեցի ձեր միջև: Եվ դուք առատությամբ կուտեք և կկշտանաք և կգովեք ձեր Տեր Աստծո անունը, Ով սքանչելի կերպով վարվեց ձեզ հետ: Եվ Իմ ժողովուրդը երբեք ամոթահար չի լինի» (AMPC):*

Երբ երիտասարդ էի, ես համոզված էի, որ մանկության տարիներին բռնության ենթարկվելը մշտական բիծ էր թողել կյանքիս վրա: Կարծում էի, թե երբեք չէի կարողանա այլ մարդկանց պես լինել կամ այնպես ապրել, ինչպես այն դեպքում, եթե դա տեղի չունենար:

Բայց Աստծո համար ամեն ինչ հնարավոր է: Նա նոր սկիզբ է տեսնում այնտեղ, որտեղ մենք փակուղի ենք տեսնում: Նա ցանկանում է վերցնել մեր անցյալի ցավը և ոչ միայն բժշկել, այլև վերականգնել մեզ՝ տալով ավելին, քան մենք ունեինք:

Միասին կարդանք Եսայի 61.7-ը. *«Ձեր ամոթի*

*փոխարեն դուք կրկնակի չափ կստանաք, և անարգանքի փոխարեն դուք կցնծաք ձեր ժառանգությամբ: Այսպես դուք կրկնակի չափ կժառանգեք ձեր երկրում և հավիտենական ուրախություն կունենաք»* (NIV):

Ես հաճախ եմ ասում, որ եթե դուք Աստծո հետ եք, երբ գլխավոր ծրագիրը ձախողվում է, Նա ունի պահուստային ծրագիր, որն ավելի լավն է, քան գլխավորը: Աստված վերականգնման և նոր սկզբի Աստված է: Եթե թույլ տաք Նրան, Նա նոր սկիզբ կտա ձեզ. Նա կրկնակի՜ չափ կտա ձեզ: Եվ դա կլինի ավելի լավը, քան կարող եք պատկերացնել:

# Գլուխ 6

# Ինչպե՞ս վեր նայել, երբ ընկճված եք

**Բոլորիս կյանքում այնպիսի պահեր են լինում, երբ տարբեր պատճառներով ընկճված ենք զգում**, սակայն չենք կարող թույլ տալ, որ մեր հանգամանքները վերահսկեն մեր զգացմունքները:

Սատանան ձգտում է բազմաթիվ բացասական մտքեր բերել, որոնք, ի վերջո, դրդում են մեզ կորցնել մեր ուրախությունը և տխրություն զգալ: Նա մեզ վհատեցնողն է և ուզում է ցանկացած ձևով ցած գցել՝ զգացմունքորեն, հոգևորապես, ֆինանսապես: Բայց Հիսուսը մեզ Խրախուսողն է, և Նա եկել է, որպեսզի բարձրացնի մեզ: Նա եկել է, որպեսզի արդարություն, խաղաղություն և ուրախություն տա մեզ: Նա ցանկանում է, որ մենք բարի բաների սպասենք մեր ապագայի համար. Նա ցանկանում է հույսով լցնել մեզ:

Յուրաքանչյուրի կյանքում հիասթափության և տրտմության պահեր են լինում՝ չիրականացած ծրագրերի կամ երազանքների պատճառով: Երբ կյանքը չի համապատասխանում մեր հույսերին, բնական է հուսալքություն կամ հիասթափություն զգալը:

Բայց մենք պետք է զգույշ լինենք, թե ինչպես ենք վարվում այդ զգացմունքների հետ, քանի որ, եթե

չափազանց երկար ժամանակ մնանք դրանցում, դա կարող է ընկճախտի հանգեցնել:

Սաղմոս 30.5-ն ասում է. *«Լացը կարող է մի գիշեր փնել, բայց առավոտյան ուրախություն է գալիս»* (AMPC):

Իրավիճակները կարող են ժամանակավորապես տխրեցնել մեզ, բայց մենք չպետք է տխուր մնանք: Եթե այդպես վարվենք, թշնամին կօգտվի այդ բաց դռնից և կշարունակի թափանցել մեր կյանք՝ ավելի լուրջ խնդիրներ բերելով:

Այնուամենայնիվ, եթե մենք Աստծո հետ ենք, երբ հիասթափվում ենք, մենք մշտապես կարող ենք վերականգնվելու որոշում կայացնել: Մենք կարող ենք որոշել նայել Նրան՝ սպասելով նոր հույսի և նորոգված ուժի, որպեսզի շարունակենք առաջ գնալ:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ ՁԵՐ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻՆ

Եթե երբևէ ընկճախտ եք վերապրել, դուք գիտեք, որ այն իրական է: Դրա պատճառով մենք կարող ենք մեկուսացված, միայնակ և անհույս զգալ... ասես ամեն ինչ մեր շուրջը փուլ է գալիս:

Ես հասկանում եմ, որ ընկճախտը կարող է ֆիզիկական կամ քիմիական անհավասարակշռության արդյունք լինել, և չեմ ուզում անտեսել դա: Կան դեպքեր, երբ Տերն առաջնորդում և ուղղորդում է դիմել փորձառու բժշկի կամ հոգեբանի, ով կարող է օգնել

արմատապես լուծել այդ խնդիրը: Ես համոզված եմ, որ բժշկությունն Աստծուց է, և որ Նա գործում է բժիշկների միջոցով՝ մեծ բաներ անելու համար:

Այնուամենայնիվ, բազմաթիվ մարդկանց դեպքում ընկճախտը նաև հոգևոր խնդիր է: Դուք պետք է հասկանաք, որ սատանան օգտագործում է ընկճախտը, որպեսզի գողանա մարդու հոգևոր ուժը և ազատությունը: Նա ձգտում է խավարով և վհատությամբ լցնել մեր մտքերը և զգացմունքորեն կործանել մեզ:

Բայց Աստված ցանկանում է օգնել մեզ, որ ընկճախտից ազատ ապրենք: Նա ցանկանում է լցնել մեզ Իր ուրախությամբ, հույսով և բարի բաների սպասումով: Նրա հետ համագործակցելու համար մենք պետք է մեկ բան սովորենք՝ չապրենք համաձայն մեր զգացմունքների:

Ես հաճախ եմ ասել, որ զգացմունքները կարող է լինել մեր մեծագույն թշնամիներից մեկը: Հեշտ է առաջնորդվել այն բանով, ինչ զգում ենք, բայց մենք պետք է հասկանանք, որ զգացմունքներն անհաստատ են. դրանք ամեն օր փոխվում են:

Մենք չպետք է հետևենք յուրաքանչյուր մտքի և զգացումի, որ ունենում ենք, քանի որ հաճախ դրանք կարող են հակասել այն ճշմարտությանը, որն Աստված ասում է մեր մասին:

Տարիներ շարունակ ես տևական ընկճախտի մեջ էի: Առավոտյան արթնանում էի, և մի ձայն մտքումս ասում էր. «Ես ընկճված եմ»: Ես հավատում էի, որ

դա իմ միտքն էր՝ չհասկանալով, որ թշնամին փորձում էր ստեր խոսել իմ մտքում:

Ավելի ուշ, երբ ավելի մտերմացա Աստծո հետ, երբ Նրա հետ ավելի մտերիմ ընթացք ունեցա և սկսեցի լրջորեն ուսումնասիրել Նրա Խոսքը, հասկացա, որ կարիք չկար հետևել յուրաքանչյուր մտքի և զգացումի, որ ունենում էի: Ես սկսեցի բարձրաձայն ասել. «Ես չեմ հուսալքվի և չեմ ընկճվի»:

Մենք մշտապես զգացմունքներ կունենանք. դրանք երբեք չեն հեռանա: Այնուամենայնիվ, մենք ենք ընտրում՝ թույլ տա՞նք, որ մեր զգացմունքները ղեկավարեն մեր կյանքը, թե՞ ոչ:

## ՈՒՇԱԴԻՐ ԵՂԵՔ ՁԵՐ ՄՏՔԵՐԻՆ

Միտքը ևս մեկ կարևոր բանալի է հուսալքությունը և ընկճախտը հաղթահարելու համար: Դուք գիտե՞ք, որ այն, ինչի մասին մտածում եք, կարող է ազդել ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառի վրա:

Առակաց 23.7-ում գրված է. *«Որովհետև ինչպես որ նա [մարդը] մտածում է իր սրտում, այնպիսին է նա...»* (AMPC):

Մեր միտքը մեծ ուժ ունի: Երբ մենք որոշում ենք կայացնում շարունակ բացասական մտածել մեր մասին կամ մտածել այն վատ բաների մասին, որոնք տեղի են ունեցել մեզ հետ, դա սնուցում է հուսալքությունը և ընկճվածությունը:

Տարիներ առաջ պայքարում էի կրծքի քաղցկեղի հետ, և դա իսկապես փորձության ընթացք էր ինձ համար: Ես գիտեի, որ հեշտորեն կարող էի ընկճախտի մեջ ընկնել, եթե տեղի տայի բացասական մտքերին:

Այդ ընթացքում Աստված դրեց իմ սրտում, որ սնուցեի միտքս հետևյալ ճշմարտություններով, իսկ հետո բարձրաձայն խոսեի դրանք այնքան հաճախ, որքան կարող էի: Ես մտածում և խոսում էի.

**«Աստվա՛ծ, ես գիտեմ, որ Դու սիրում ես ինձ: Ես հավատում եմ, որ ամեն բան գործում է հօգուտ նրանց, ովքեր սիրում են Քեզ և կանչված են՝ ըստ Քո նպատակի: Ես վստահում եմ Քեզ և չեմ վախենա»** *(տե՛ս Հռոմեացիների 8.28,35-39, Հեսու 1.9, Առակաց 3.5):*

Իրականում, որքան ավելի եք ժամանակ տրամադրում Աստծո Խոսքը կարդալուն և դրա շուրջ մտորելուն, այնքան Խոսքն ավելի է մուտք գործում ձեր ներսը և փոխում է ներսից՝ դուրս:

Եբրայեցիների 4.12-ում գրված է, որ Աստծո Խոսքը կենդանի և զորավոր է: Խոսքը կարող է փոխել այն, թե ինչպես եք տեսնում ձեզ, նույնիսկ՝ ձեր ապագան:

Երբ հագեցնեք ձեր միտքն այն խոսքերով, որոնք Աստված ասում է ձեր մասին, և ընդունեք, որ Նրա խոստումները ձեզ են պատկանում, դուք հույսով կլցվեք, և ձեր հավատքը կկառուցվի:

# ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԴԵՂԱՏՈՄՍ ԸՆԴԴԵՄ ԸՆԿՃԱԽՏԻ

Ինչպես նշեցի, երբեմն ընկճախտը ֆիզիկական կամ քիմիական խնդիրների արդյունք է, և ես հավատում եմ, որ կարևոր է թույլ տալ բժիշկներին օգնել մեզ՝ ըստ Աստծո առաջնորդության: Բայց նույնիսկ երբ մենք այցելում ենք բժշկին, կարծում եմ՝ մեր ներսում պետք է համոզմունք լինի, որ վստահում ենք Աստծուն, Ով մեր Բժիշկն է:

Այնուամենայնիվ, շատ հաճախ ընկճախտը նաև հոգևոր պայքար է… և Աստվածաշունչը հրաշալի ցուցումներ է տալիս մեզ՝ դրանում հաղթանակ տանելու համար:

Եսայի 61.3-ը պատվիրում է մեզ հագնել *«գովաբանության պատմուճան՝ ճնշվածության հոգու փոխարեն…»* (NKJV):

Գուցե մենք միշտ չէ, որ զգացմունքորեն ցանկանում ենք փառաբանել Աստծուն, բայց մի քանի րոպե տրամադրել Տիրոջը՝ Նրա հետ խոսելու և գոհանալու Նրա բարության համար, մեր ամենաազդեցիկ զենքերից է՝ հուսալքության և ընկճախտի դեմ պայքարելու համար:

Մենք բառացիորեն հրավիրում ենք Աստծո ներկայությունը մեր իրավիճակի մեջ և դրա շնորհիվ ստանում ենք Նրա զորությունը, խաղաղությունը և ուրախությունը: Փիլիպեցիների 4.4-ում գրված է. *«Մշտապես ուրախացեք Տիրոջ մեջ [հիացեք, զվարթացեք Նրանում]. կրկին ասում եմ՝ ուրախացեք»* (AMPC):

Մեր դժվարին պահերին Տիրոջը փառաբանելը ամենակարևոր բանն է, որ կարող ենք անել: Ինչո՞ւ: Որովհետև, երբ որոշում ենք կենտրոնանալ Աստծո վրա և ցնծալ այն բարիքների համար, որ Նա շնորհել է, մենք մեծարում ենք Նրան՝ բարձրացնելով ավելի, քան մեր խնդիրները:

Ճշմարտությունն այն է, որ Աստված մշտապես բարի է՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում մեր կյանքում: Նա մեր ուրախության Աղբյուրն է, և մենք կարող ենք ապաստան գտնել Նրանում ցանկացած պահի, երբ դրա կարիքն ունենք:

Այս ճշմարտությունը հիշեցնում է ինձ Սաղմոս 16.11. *«...Քո երեսի առջև ուրախությունների լիություն կա, և Քո աջ կողմը՝ քաղցրություններ՝ հավիտյան»:*

Երբ երկրպագում ենք Աստծուն, մենք հրավիրում ենք Նրա ներկայությունը մեր կյանքի մեջ: Նա փոխարինում է մեր հուսալքությունը և տրտմությունն Իր ուրախությամբ և խաղաղությամբ՝ մեզ հույս տալով և նոր կյանքի շունչ փչելով մեր իրավիճակներում:

Մենք միշտ չէ, որ կարող ենք փոխել այն, ինչ տեղի է ունենում մեր շուրջը, բայց Աստծո ներկայությունը կփոխի մեզ՝ այն, թե ինչպես ենք մտածում, ինչ ենք զգում և ինչ կերպով ենք դիտարկում մեր հանգամանքները:

# ԹՈ՛ՒՅԼ ՏՎԵՔ ԱՍՏԾՈՒՆ ՎԵՐՑՆԵԼ ՁԵՐ ՑԱՎԸ

Մենք երբեք չենք կարողանա լիովին ազատ լինել ցավից և հուսալքությունից, սակայն չպետք է թույլ տանք, որ այն, ինչ տեղի է ունենում ներկայում, կործանի մեր ապագան:

Մենք կարող ենք որոշել շրջադարձ բերել մեր իրավիճակում՝ բաց թողնելով այն, ինչը հիասթափություն և ընկճվածություն է պատճառել մեզ, և գնալ առաջ՝ դեպի այն բարիքը, որ Աստված ծրագրել է մեր ապագայի համար:

Ինձ դուր է գալիս Առաջին Պետրոսի 5.9-ը, որը պատվիրում է. *«...հակառակվե՛ք նրան [սատանային]... [նրա հարձակման դեմ]»* (AMPC): Անչափ կարևոր է անմիջապես հակառակվել հուսալքությանը և ընկճախտին, որովհետև որքան երկար մնանք դրանց մեջ, այնքան դժվար կլինի դրանց հակառակվելը:

Տարիներ շարունակ ասել եմ հետևյալը. եթե թույլ չտաք, որ սատանան տպավորի ձեզ իր գործերով, նա չի կարողանա ճնշել ձեզ, և եթե նա չկարողանա ճնշել ձեզ, չի կարողանա ընկճել ձեզ:

Հաջորդ անգամ, երբ այնպիսի իրավիճակի բախվեք, որի նպատակը ձեզ շփոթեցնելն է, որոշում կայացրեք դիմել Սուրբ Հոգուն և թույլ տալ, որ Նա հույսով լցնի ձեզ: Որոշում կայացրեք հավատալ Աստծո Խոսքին, ոչ թե ձեր զգացմունքներին: Հագեցրե՛ք ձեր

միտքը և շուրթերը Աստծո Խոսքի դրական և հույսով լեցուն ճշմարտություններով:

Կարիք չկա, որ թույլ տաք հուսալքությանը և ընկճախտին ղեկավարել ձեր կյանքը: Երբ ինչ-որ բան է տեղի ունենում, թույլ տվեք ամեն հույսի Աստծուն զորացնել և խրախուսել ձեզ՝ ներսից դեպի դուրս:

Քանի որ, անկախ այն բանից, թե ինչով եք անցնում, Աստված պատրաստ է և կամենում է օգնել ձեզ, վերցնել ձեր ցավը... և հրաշալիորեն փոխել ձեր իրավիճակը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

# Դուք դժվարին ժամանակո՞վ եք անցնում

**Եթե հենց հիմա դուք դժվարին ժամանակով եք անցնում, ուզում եմ, որ իմանաք. Աստված սիրում է ձեզ**: Նա տեսնում է, թե ինչով եք անցնում, Նա ձեզ հետ է և ցանկանում է օգնել ձեզ՝ հենց այնտեղ, որտեղ գտնվում եք:

Սաղմոս 34.18-ում (NLT) գրված է. *«Տերը մոտ է սրտով կոտրվածներին. Նա փրկում է նրանց, որոնց հոգիները փշրված են»:* Երբ մենք ցավ ենք զգում, Աստված զգում է այն մեզ հետ:

Հնարավոր է, որ հենց հիմա դուք անհնարին իրավիճակում եք: Բայց ուզում եմ, որ իմանաք՝ Աստված կարող է ամեն ինչ նոր դարձնել. Նա կարող է բարուն գործակից դարձնել ձեր խնդիրը:

Եթե դուք դժվարին հանգամանքներ ունեք կամ այնպիսի իրավիճակում եք, որը սպառնում կամ շփոթեցնում է ձեզ, առաջարկում եմ, որ հենց հիմա մի պահ կանգ առնեք և աղոթեք.

**«Հա՛յր, Դու պետք ես ինձ հիմա: Դու ասում ես, որ սիրում ես ինձ և տեսնում ես ինձ այնտեղ, որտեղ հենց հիմա եմ… և չնայած այն բանին, թե ինչ եմ**

**զգում, ես որոշում եմ հավատալ Քո Խոսքին: Ի դեմս այն ամենի, ինչով անցնում եմ, ես Քեզնից եմ օգնություն սպասում: Ես ունեմ Քո զորության կարիքը, որպեսզի պայքարեմ այն ամենի հետ, ինչն այս պահին չափազանց մեծ է թվում: Օգնի՛ր ինձ՝ հայացքս ուղղեմ Քեզ: Խնդրո՛ւմ եմ, հայտնի՛ր Քեզ... խրախուսի՛ր ինձ անցնել իմ առջև գտնվող ճանապարհը: Օգնի՛ր ինձ շոշափելի կերպով վերապրել Քո սերը և ներկայությունը: Ես լիովին հանձնվում եմ Քո ձեռքերի մեջ: Հիսուսի անունով, ամե՛ն»:**

Ես նույնպես խրախուսում եմ ձեզ որոշ ժամանակ տրամադրել և ընթերցել ստորև գտնվող աստվածաշնչյան խոսքերը: Կարող եմ ասել իմ փորձառությունից, որ Աստծո Խոսքը կփոխի ձեր կյանքը՝ այն, թե ինչպես եք դուք մտածում և զգում ձեզ... և նույնիսկ՝ թե ինչպես եք տեսնում ձեր ապագան:

Ես սիրում եմ Երեմիա 29.11-ը: Այս խոսքն ասում է, որ Աստված բարի ծրագրեր ունի ձեր ապագայի համար. ծրագրեր՝ խաղաղության համար... ծրագրեր՝ ձեզ հույս տալու համար:

Միշտ հիշե՛ք, որ Աստված ձեր կողմից է: Նա անհնարինի Աստված է... *և Նա կարող է հրաշքի վերածել ձեր իրավիճակը:*

## ԱՍՏՎԱԾ ՍԻՐՈՒՄ Է ՁԵԶ

*«Ես սիրել եմ քեզ հավիտենական սիրով. Ես մոտեցրել եմ քեզ անսպառ բարությամբ»:*
**Երեմիա 31.3, NIV**

*«Որովհետև սարերը կքաշվեն, և բլուրները կսասանվեն, բայց Իմ ողորմությունը քեզնից չի քաշվի, և Իմ խաղաղության ուխտը չի սասանվի,- ասում է քեզ ողորմող Տերը»:*
**Եսայի 54.10**

*«Իմ թափառելը (կամ՝ պառապանքները) Դու համարում ես: Իմ արտասուքները դի՛ր Քո տիկի մեջ. ահա՛ նրանք Քո Գրքում են»:*
**Սաղմոս 56.8**

*«Քեզ որովայնում չստեղծած՝ Ես քեզ գիտեի, և արգանդից դեռ դու դուրս չեկած՝ Ես քեզ սրբեցի…»:*
**Երեմիա 1.5**

## ԱՍՏՎԱԾ ԿՕԳՆԻ ՁԵԶ

*«Մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ հետ եմ: Մի՛ հուսալքվիր, որովհետև Ես քո Աստվածն եմ: Ես կզորացնեմ քեզ և կօգնեմ քեզ: Ես կաջակցեմ քեզ Իմ հաղթական աջ ձեռքով»:*
**Եսայի 41.10, NLT**

*«Թեև գնամ մահի շուքի ձորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես»:*

**Սաղմոս 23.4**

*«Ես խնդրեցի Տիրոջը, և Նա պատասխան տվեց ինձ, և իմ ամեն ահ ու վախից ազատեց ինձ»:*

**Սաղմոս 34.4**

*«Երբ որ ջրերից անցնես, Ես քեզ հետ եմ, և եթե գետերով, նրանք քեզ չեն ողողի. երբ որ գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չպիտի վառի»:*

**Եսայի 43.2**

# ԱՍՏՎԱԾ ՁԵՐ ՀՈՒՅՍՆ Է

*«Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները, և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը»:*

**Երեմիա 29.11**

*«…Որովհետև Նա [Աստված] Ինքն է ասել՝ Ես ոչ մի կերպով չեմ ձախողի քեզ, ո՛չ էլ կթողնեմ քեզ առանց աջակցության… [Իհարկե՝ ո՛չ]»:*

**Եբրայեցիների 13.5, AMPC**

*«Որովհետև Աստծո առջև ոչ մի բան անկարելի չէ»:*

**Ղուկաս 1.37**

*«Գցի՛ր քո բեռը Տիրոջ վրա [ազատվելով դրա ծանրությունից], և Նա հենարան կլինի քեզ»:*
**Սաղմոս 55.22, AMPC**

*«Ինչ պահի էլ, որ վախենամ, ես համարձակություն կունենամ Քո մեջ և կվստահեմ ու կապավինեմ Քեզ»:*
**Սաղմոս 56.3, AMPC**

## ԱՍՏՎԱԾ ՁԵՐ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ՈՒԺԸ

*«Նա բժշկում է սրտով կոտրվածներին և փաթաթում է նրանց վերքերը [բուժելով նրանց ցավերը և նրանց վշտերը]»:*
**Սաղմոս 147.3, AMPC**

*«Նա է հոգնածին ուժ տվողը, և Նա կարողություն չունեցողին զորություն է շատացնում... Տիրոջն ապավինողները կնորոգվեն ուժով, թևերով վեր կսլանան՝ արծիվների պես, կվազեն և չեն վաստակի, կգնան և չեն հոգնի»:*
**Եսայի 40.29,31**

*«Ինձ մոտ եկե՛ք, բոլոր վաստակածներ և բեռնավորվածներ, և Ես հանգիստ կտամ ձեզ»:*
**Մատթեոս 11.28**

*«Աստված մեր ապաստանն է և ուժը, մշտապես ներկա օգնությունը նեղության մեջ»:*
**Սաղմոս 46.1, NIV**

# ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

Աստված սիրում է քեզ և Նա ցանկանում է անձնական հարաբերություն ունենալ քեզ հետ: Եթե դու Հիսուս Քրիստոսին դեռ չես ընդունել որպես քո Փրկիչ, ապա դու դա կարող ես անել հենց հիմա: Պարզապես բացի՛ր քո սիրտը Նրա առաջ և աղոթի՛ր այս աղոթքը…

«Հայր, ես գիտեմ, որ ես մեղանչել եմ քո դեմ: Խնդրում եմ ների՛ր ինձ: Մաքրի՛ր ինձ: Ես խոստանում եմ վստահել Հիսուսին՝ Քո Որդուն: Ես հավատում եմ, որ Նա մահացավ ինձ համար: Նա իմ մեղքն Իր վրա վերցրեց, երբ Նա մահացավ խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա մեռելներից հարություն է առել: Հենց հիմա ես իմ կյանքը տալիս եմ Հիսուսին:

Հա՛յր, շնորհակա՛լ եմ քո տված ներման պարգևի և հավիտենական կյանքի պարգևի համար: Խնդրում եմ օգնի՛ր ինձ ապրել Քեզ համար: Հիսուսի անունով, ամե՛ն»:

Եթե դու քո սրտից աղոթեցիր, ապա Աստված ընդունեց քեզ, մաքրեց քեզ և հոգևոր մահվան կապանքից քեզ ազատ արձակեց: Ժամանակ վերցրո՛ւ, որպեսզի ընթերցես և ուսումնասիրես այս սուրբգրային համարները և խնդրի՛ր Աստծուն, որ Նա խոսի քեզ հետ, երբ Նրա հետ կատարես այս ճանապարհորդությունը քո նոր կյանքում:

Հովհաննես 3.16
Եփեսացիների 1.4
Ա Հովհաննես 1.9
Ա Հովհաննես 5.1
Ա Կորնթացիների 15.3-4
Եփեսացիների 2.8-9
Ա Հովհաննես 4.14-15
Ա Հովհաննես 5.12-13

Աղոթի՛ր և խնդրի՛ր Նրան, որ Նա օգնի քեզ գտնել լավ եկեղեցի, որը հավատում է Աստվածաշնչին, որպեսզի կարողանաս ոգեշնչված լինել Քրիստոսի հետ քո հարաբերության մեջ աճելու վերաբերյալ: Աստված միշտ քեզ հետ է: Մեկ օր Նա քեզ կառաջնորդի ճիշտ ժամանակին և ցույց կտա, թե ինչպես կարելի է լիառատ կյանքով ապրել, որը Նա պատրաստել է քեզ համար:

**tv.joycemeyer.org/Armenian**

# ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ջոյս Մայերը հանրաճանաչ հեղինակ է՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի, և աշխարհով մեկ հայտնի Աստվածաշնչի ուսուցիչ: Նրա ուսուցումները հասանելի են «Ջոյս Մայերի ծառայության» միջոցով: Նա սովորեցնում է գործնականորեն և անկեղծորեն՝ անթաքույց կիսվելով իր կյանքից: Նա օգնում է միլիոնավոր մարդկանց կիրառել աստվածաշնչյան սկզբունքները կյանքի իրավիճակներում և հույս ու վերականգնում գտնել Հիսուս Քրիստոսի միջոցով: Նրա՝ «Միտքը կռվի դաշտն է» գիրքը տարիներ շարունակ հանրաճանաչ գիրք է եղել. այն սովորեցնում է մարդկանց, թե ինչպես հաղթեն պատերազմն իրենց մտքում և «մտածել այն մասին, թե ինչ են մտածում»: Ջոյսը համաժողովներ է անցկացրել Ամերիկայի Միացյալ Նահանգներում և աշխարհով մեկ: Նրա՝ «Վայելել ամենօրյա կյանքը» հեռուստահաղորդումը հեռարձակվում է հեռուստատեսությամբ, ռադիոյով և առցանց միլիոնավոր մարդկանց համար՝ ավելի քան 100 լեզուներով: Նա նույնպես գրել է ավելի քան 130 գիրք, որոնք թարգմանվել են ավելի քան 155 լեզուներով:

# ՋՈՅՍ ՄԱՅԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Պատմում ենք Քրիստոսի մասին - Սիրում ենք մարդկանց

*«Ջոյս Մայերի ծառայության»* կանչն է՝ քարոզել Ավետարանը, աշակերտել ազգերը և տարածել Քրիստոսի սերը:

Մեդիայի միջոցով մենք սովորեցնում ենք մարդկանց կիրառել աստվածաշնչյան ճշմարտությունը կյանքի յուրաքանչյուր բնագավառում և խրախուսում ենք ծառայել իրենց շրջապատող աշխարհին: Մեր միսիոներական ճյուղը հանդիսացող «Հույսի Ձեռք» («Hand of Hope») ծառայության միջոցով մենք աշխարհով մեկ մարդասիրական օգնություն ենք տրամադրում, կերակրում ենք քաղցածներին, հագցնում ենք աղքատներին, ծառայում ենք տարեցներին, այրիներին և որբերին, հասնում ենք նաև կյանքի տարբեր ոլորտներում գտնվող բոլոր տարիքային խմբերի մարդկանց:

*«Ջոյս Մայերի ծառայության»* հիմքն է հավատքը, անկեղծությունը և նվիրյալ աջակիցները, որոնք միանում են այս կանչին:

* * *

*«Ջոյս Մայերի ծառայությունից»* ավելի խրախուսանք ստանալու համար այցելե՛ք.

**tv.joycemeyer.org/Armenian**



# Դուք միայնա՛կ չեք

Դուք դժվարին ժամանակո՞վ եք անցնում: Գուցե բախվել եք անկանխատեսելի դժբախտության, պայքարում եք առողջական լուրջ խնդրի հետ կամ, նույնիսկ, չգիտեք, թե ինչպես եք կերակուր հայթայթելու: Ինչ էլ լինի, Աստված չի ցանկանում, որ միայնակ պայքարեք: Փոխարենը, մեծագույն քայլը, որը կարող ենք անել, Նրան վստահելն է՝ իմանալով, որ Նա մեզ հետ է, և մենք կարող ենք լիառատ հույս ունենալ:

## Այս գրքում Ջոյսը սովորեցնում է.

- Ինչպես ստանալ Աստծո մխիթարությունը դժվարին ժամանակներում:
- Ինչպես ձեր վերաբերմունքը կարող է լիովին փոխել ձեր իրավիճակը:
- Ինչպես սկսել նոր կյանք՝ ետևում թողնելով անցյալը:
- Աստվածաշնչյան բանալիներ՝ ընկճախտը և հուսալքությունը հաղթահարելու համար:

Ինչպիսի իրավիճակում էլ լինեք, այս գիրքը կօգնի ձեզ ավելի մեծ սպասումներ ունենալ Աստծուց և այլևս չդադարել հուսալ Նրան: Չէ՞ որ Նա «Հույսի Աստվածն» է (տե՛ս Հռոմեացիների 15.13), և Նա կարող է հրաշալիորեն փոխել ձեր իրավիճակը: